ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 1 դեկտեմբերի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի
Անդամակցությամբ՝ Մ. Թոփուզյանի
Հ. Նազարյանի

Քննության առնելով քաղաքացիներ Լիլյա Ղափլանյանի եւ Ալբերտ Խաչատրյանի
անհատական դիմումի ընդունելիության հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացիներ Լիլյա Ղափլանյանը եւ Ալբերտ Խաչատրյանը 2010թ. նոյեմբերի 15-ին դիմել են ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

1) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը եւ 223-րդ հոդվածի 1-ին մասը՝ այնքանով, որքանով նշված նորմերով վճռաբեկ բողոք բերելու իրավունք չի տրվում գործին մասնակից չդարձված այն անձին, ում իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ ազդող դատական ակտ է կայացրել (ստորադաս դատարանի դատական ակտը փոխելով կամ կողմերի հաշտության համաձայնությունը հաստատելով) վճռաբեկ դատարանը, ճանաչել ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր:

2) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը ճանաչել ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր:

3) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204[11]–րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը ճանաչել ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր՝ այնքանով, որքանով՝

- այդ նորմով նոր երեւան եկած հանգամանք է դիտվել միայն փվյալ վճռի, բայց ոչ նաեւ վճռաբեկ կամ վերաքննիչ դատարանների որոշումների կայացման համար հիմք ծառայած դատական ակտի, դատավճռի կամ այլ մարմնի որոշման վերացումը.

- այդ նորմով նոր երեւան եկած հանգամանք է դիտվել փվյալ վճռի կայացման համար հիմք ծառայած... այլ մարմնի որոշման վերացումը, եւ այդպիսին չի դիտվել փվյալ վճռի հիմքում դրված, այլ մարմին չհամարվող նոտարի կողմից տրված սեփականության իրավունքի վկայագրի վերացումը:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ՝

1. Դիմողների կարծիքով՝ վիճարկվող նորմերի կիրառման արդյունքում իրենք զրկվել են իրենց՝ խախտված իրավունքների ճանաչման եւ դատական պաշտպանության արդյունավետ միջոցի հնարավորությունից:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող՝ 233-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի 2008թ. հոկտեմբերի 8-ի ՍԴՈ-765 որոշումը, ինչը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն գործի քննությունը մերժելու հիմք է:

3. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված դրույթի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողները բարձրացնում են դրա կիրառման իրավաչափության հարց: Փաստորեն դիմողները ձեւականորեն առաջ քաշելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց՝ ըստ էության բարձրացնում են այդ դրույթի կիրառման հարց: Ուստի առկա է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով եւ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշմամբ նախատեսված դիմումի քննությունն այս դրույթի մասով մերժելու հիմք՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմում:

4. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող՝ 240-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը դիմողների նկատմամբ չի կիրառվել, ինչը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն դիմումի քննությունը մերժելու հիմք է:

5. Դիմումի ուսումնասիրությունից ակնհայտորեն երեւում է, որ դիմողները ձեւականորեն առաջ քաշելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204[11]-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով ամրագրված դրույթի սահմանադրականության հարցը՝ իրականում վիճարկում են դրա կիրառման իրավաչափության հարցը, ինչը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով, ինչպես նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշմամբ նախատեսված՝ դիմումի քննությունը մերժելու հիմք է:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացիներ Լիլյա Ղափլանյանի եւ Ալբերտ Խաչատրյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

1 դեկտեմբերի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/2-38